


ԲԱՆԿԱՅԻՆ ՉՈՐԾ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԿՐՈՒԹՅՈՒՆ



ՀՈՎԱՏՓ ՍԱՐԳՍՅԱՆ

*ՀՊՏՀ բանկային և ապահովագրական գործի
ամբիոնի հայցորդ*

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒԴԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒԴԻՆԵՐԸ

ՀՀ առևտրային բանկերի մասնաձյուղերի կառավարման կատարելագործման անհրաժեշտությունը թելադրվում է դրանց թվի օրեցօր աճի միտումով, ինչը պայմանավորված է բանկային գործառնությունների շրջանակների ընդլայնմամբ, ժամանակակից տեսակների ներդրմամբ, վերջիններիս նկատմամբ բնակչության և տնտեսավարող սուբյեկտների պահանջարկի բուռն աճով, քանի որ ՀՀ-ում վերջին 10 տարիներին (չհաշված ձգնաժամի երկու տարիները) նկատվում է տնտեսության աճ, բանկային համակարգի միջոցով արտագնա աշխատանքի մեկնած մեր հայրենակիցների կողմից իրենց ընտանիքներին ուղարկվող դրամական փոխանցումների աճ: Բացի այդ, Կառավարության կողմից իրականացվում է ֆինանսական քաղաքականություն, որի նպատակն է կրճատել կանխիկ դրամաշրջանառությունը, ինչը, անտարակույս, դրամական անկանխիկ հաշվարկների (որոնք կատարվում են բանկերի կողմից) նկատելի աճ է ապահովել: Բնականաբար, վերոհիշյալից ելնելով, պահանջարկը բանկային գործառնությունների նկատմամբ աճում է ոչ միայն Երևանում, այլև ՀՀ մյուս մարզերում, նույնիսկ հեռավոր շրջաններում: Նման պայմաններում առևտրային բանկը, առանց մասնաձյուղերի լայն ցանցի, չի կարող բավարարել բանկային գործառնությունների նկատմամբ արագ տեմպերով աճող պահանջարկը: Առևտրային բանկերի մասնաձյուղերի թվի, ինչպես նաև գործառնությունների ծավալների աճը պահանջում է մասնաձյուղերի տնտեսական կառավարման էական փոփոխություններ:

Նախ՝ մասնաձյուղերի կառավարումն անհրաժեշտ է դիտարկել գործընթացային մոտեցմամբ, այսինքն՝ որպես նպատակների որոշման, դրանց հասնելու գործողությունների պլանի մշակման, անընդհատ վերահսկողության և

գործունեության արդյունավետության գնահատման գործընթացների համալիր: Բացի այդ, կառավարումն անհրաժեշտ է ընկալել որպես փոխկապակցված գործառնությունների՝ պլանավորման, կազմակերպման, շահադրման և վերահսկողության ամբողջություն, իսկ հիմնական ուշադրությունը կենտրոնացնել պլանավորման և վերահսկողության վրա:

Առևտրային բանկերի պլանավորման գործընթացը մեծապես կախված է համապատասխան մեխանիզմների և մեթոդաբանության զարգացման մակարդակից և բանկերի կողմից դրանց օգտագործման աստիճանից: Պլանավորման տեսանկյունից կարևորվում է բանկի ռազմավարության մշակումը, որը պետք է հաշվի առնի ոչ միայն հնարավորությունները և, դրանց համապատասխան, պարտավորությունների ստանձնումը, այլև բարձր ռիսկերը՝ պայմանավորված ֆինանսական շուկաներում տարբեր արժույթների նկատմամբ դրամի փոխարժեքի, վարկի տոկոսադրույքի տատանումներով, դրամական զանգվածի փոփոխություններով, ինչպես նաև վարկառուների վարկունակությամբ և վարկերի չվերադարձման վտանգներով և այլն: Այդպիսի ռազմավարության մշակման ժամանակ անհրաժեշտ է համալիր մոտեցում, որը թույլ կտա ապահովել բանկի ֆինանսական կայունությունը, իրացվելիությունը, եկամտաբերությունը և գործունեության արդյունավետության մակարդակի բարձրացումը: Քաղաքականության նպատակայնության ապահովման համար հարկ է իրականացնել անընդհատ վերահսկողություն¹:

«Առևտրային բանկերում ներկայումս մշակվում և հաստատվում է բանկի երկարաժամկետ ռազմավարություն, կազմվում են կարճաժամկետ պլանային ծրագրեր, որոնք ընդգրկում են կապիտալի փոփոխությունները, ավանդների, վարկային ներդրումների, դրանց կառուցվածքի, տոկոսադրույքների մակարդակների, վճարահաշվարկային ծառայությունների մատուցման պայմանները, ծավալները, եկամուտների ու ծախսերի և այլ գործառնությունների փոփոխությունները²: Պլանավորման գործընթացում մասնաճյուղերը չեն առանձնացվում, այլ ներառվում են ընդհանուր կազմում: Այսինքն՝ ներկայումս «Առևտրային բանկերում պլանավորումը կատարվում է *վերևից ներքև* սկզբունքով, այսինքն՝ առևտրային բանկի կենտրոնական մասնաճյուղը կամ գլխամասը կազմակերպում է ընդհանուր գործընթացը, որոշում համամասնությունները, գործառնությունների ծավալները, այնուհետև պլանն առաջադրում մասնաճյուղերին, ինչը, մեր կարծիքով, այսօր, երբ բանկերի մասնաճյուղերի դերը բավականին աճել է, երբ վերջիններս իրականացնում են վարկային ներդրումների մոտ 80%-ը, որոշ բանկերում նույնիսկ 100%-ը, անընդունելի է:

Մենք առաջարկում ենք «Առևտրային՝ հատկապես լայն մասնաճյուղային ցանց ունեցող բանկերում կիրառել պլանավորման առավել արդյունավետ՝ *ներքևից վերև* և *վերևից ներքև* մեթոդները, որով մասնաճյուղերին հնարավորություն կտրվի զոնե կարճաժամկետում, ելնելով իրենց տարածաշրջանի կանխատեսվող զարգացումներից, մակրոմակարդակի փոփոխություններից, մշակել գործունեության ծրագիր և ներկայացնել կենտրոն: Վերջինս, ամփոփելով բոլոր մասնաճյուղերի ծրագրերը, հաշվի առնելով բանկի հնարավորությունները, ֆինանսական վիճակի, իրացվելիության անհրա-

¹ Տե՛ս **Ачкасов А.**, Вопросы ликвидности и их отражение в банковских балансах. М., 2004:

² Տե՛ս **Анганова О.**, Внутренний контроль в коммерческом банке. М., Центр подготовки персонала ЦБ РФ, 1998:

ժեշտ մակարդակի ապահովման պահանջները, բանկի որդեգրած ռազմավարությունը, կմշակի ընդհանուր ծրագիր և կառաջադրի մասնաձյուղերին: Կարծում ենք՝ նման մեթոդը առավել նպատակահարմար է կիրառել մեծաքանակ և զգալի գործառնություններ իրականացնող մասնաձյուղերի դեպքում: Մեծածավալ գործառնություններ իրականացնող՝ հատկապես մարզերում գտնվող մասնաձյուղերն հիմնականում լավատեղյակ են տվյալ տարածաշրջանի զարգացման միտումներին, վարկառուների իրական ֆինանսական վիճակին, մարզում բանկային գործառնությունների նկատմամբ առկա իրատեսական պահանջարկին և ի վիճակին են մշակելու նույնիսկ հեռանկարային ծրագրեր՝ իհարկե համապատասխան կադրային հագեցվածության պայմաններում: Արդյունքում՝ կարող են առավել ճշգրիտ կանխատեսումներ կատարել:

Ինչ վերաբերում է առևտրային բանկերի տնտեսական կառավարման հաջորդ բաղկացուցիչն՝ վերահսկողությանը, ապա այս բնագավառում նույնպես առկա են հիմնախնդիրներ, որոնք լուծման կարիք ունեն: Ինչպես արդեն նշել ենք, մասնաձյուղերի համար նորմատիվներ չեն մշակվում և նորմատիվային վերահսկողություն չի իրականացվում: Վերահսկողությունը հիմնականում պարբերական բնույթ է կրում, անհրաժեշտության դեպքում նաև արտահերթ ստուգումներ են կատարվում:

Մեր կարծիքով՝ «՝ առևտրային բանկերում պետք է ներդնել մասնաձյուղերի (գոնե խոշոր) նորմատիվային վերահսկողության տարրեր:

Այսպես՝ բոլոր վարկերի տրամադրման որոշումները (բացի ոչ ռիսկային՝ ոսկով ապահովված վարկերի) ընդունում են առևտրային բանկերի կենտրոնական վարկային վարչությունները: Բնականաբար, նման իրավիճակը չի կարելի արդյունավետ համարել մի շարք պատճառներով: Նախ՝ վարկավորման գործընթացի հիմնական մասը, այդ թվում՝ վարկառուի վարկունակության գնահատումը կատարվում է մասնաձյուղի կողմից և միայն վարկի տրամադրման որոշումն ընդունում է կենտրոնական ստորաբաժանումը՝ հիմնականում մասնաձյուղի ներկայացուցչի առաջարկի ներկայացման հիման վրա՝ հաշվի առնելով նաև բանկի հնարավորությունները և ներքին պահանջները վարկառուի նկատմամբ: Կենտրոնական վարկային ստորաբաժանումները որոշումներն ընդունելու համար հրավիրում են նիստ, որպես կանոն, շաբաթը մեկ կամ երկու անգամ: Վերջին տարիներին վարկավորման գործընթացի երկարաձգումն առաջացնում է վարկառուների դժգոհությունը, և խիստ անհրաժեշտության դեպքում վերջիններս դիմում են ոչ թե բանկերին, այլ վաշխառուներին կամ վարկային կազմակերպություններին, որոնք ավելի արագ են վարկ տրամադրում, ավելի կոշտ պայմաններով և բարձր տոկոսադրույքով: Բացի այդ, վարկային վարչությունը, ելնելով բանկի վարկային քաղաքականության պահանջներից, հաճախ մերժում է վարկային հայտը: Սակայն մասնաձյուղի ներկայացուցիչները (բացառությամբ Երևանի մասնաձյուղերի), առավել տեղյակ են իրենց տարածաշրջանի վարկառուների ֆինանսական վիճակին, որը սովորաբար տնտեսության պայմաններում հարկային հաշվետվություններում հիմնականում արտացոլված չէ, բայց իրականում բարձր վարկունակություն ունեն:

Քանի որ բանկերը շահագրգռված են վարկունակ հաճախորդների ներգրավմամբ, մենք առաջարկում ենք մասնաձյուղերի տնտեսական կառավարման հետևյալ մոդելը, որի հիմքում նորմատիվային կառավարումն է:

Նախ պետք է մասնաձյուղերին հարաբերական ինքնուրույնություն տրամադրել, իսկ դրանց ֆինանսական կայունության, հուսալիության ապահովման նպատակով առևտրային բանկերը կարող են մշակել և օգտագործել տնտեսական ներքին նորմատիվներ, որոնք արդյունավետորեն գործադրվում են մի շարք զարգացած երկրներում: Սկզբնական շրջանում անհրաժեշտ է ներքին նորմատիվներ սահմանել ըստ ՀՀ ԿԲ սահմանած նորմատիվների, բացի, իհարկե, Ն¹-ից, այսինքն՝ կապիտալի համարժեքության նորմատիվից: Որպեսզի հաշվարկվի իրացվելիության նորմատիվը, հարկ է պարտավորությունների մեջ ներառել ինչպես ներգրավված ավանդները, այնպես էլ առևտրային բանկի կողմից մասնաձյուղին տրամադրված վարկային ռեսուրսները: Դրանք մասնաձյուղին կտրվեն նրա՝ կանխատեսումների միջոցով նախօրոք որոշած չափով՝ հայտ ներկայացնելով բանկի հնարավորությունների սահմաններում: Ինչպես տեսնում ենք, այս մոդելով մասնաձյուղին պետք է իր ռեսուրսներն ինքնուրույնաբար օգտագործելու հնարավորություն տրվի: Միջոցների արդյունավետ օգտագործման և բանկի ֆինանսական կայունությունը ապահովելու նպատակով վերահսկողություն սահմանել խիստ պատժամիջոցներ կիրառելով մասնաձյուղի ղեկավարների, նաև ռիսկային գործարքների պատասխանատուների նկատմամբ որոշակի խախտումների դեպքում³: Պատժամիջոցները պետք է լինեն ոչ միայն վարչական, այլ նաև ֆինանսական բնույթի, որպեսզի հնարավորինս բացառվի խախտումների միջոցով անհիմն հարստանալու գայթակղությունը: Առևտրային բանկի գլխամասային ստորաբաժանումը պետք է նաև ստուգումներ իրականացնի մասնաձյուղերում ինչպես ըստ տարեկան տվյալների, այնպես էլ մշտադիտարկման եղանակով: Միաժամանակ պետք է նշել, որ հետագայում, երբ ՀՀ առևտրային բանկերում յուրացվի ներքին նորմատիվների կիրառման մեթոդը, տարբեր տարածաշրջանային մասնաձյուղերի համար բանկը կարող է սահմանել հատուկ նորմատիվներ՝ ելնելով տվյալ տարածաշրջանի տնտեսական վիճակից, պետության կողմից իրականացվող քաղաքականությունից, մասնաձյուղի կառավարման որակից և այլ գործոններից:

Բնականաբար, ինքնուրույն գործելու համար մասնաձյուղերը պետք է ներգրավեն դրամական միջոցներ, քանի որ, չունենալով իրավաբանական անձի կարգավիճակ, չունեն սեփական միջոցներ: Սակայն տվյալ դեպքում կարելի է օգտագործել ԽՍՀՄ-ում կիրառվող փորձը՝ տնտեսական հաշվարկի մեխանիզմը, ըստ որի կազմակերպության տնօրինմանը տրվում էին համապատասխան միջոցներ, բանկերի դեպքում՝ դրամական միջոցներ, որոնց օգտագործման դիմաց կենտրոնական կառույցին վճարվում էր ֆոնդավճար, իսկ եկամուտների և ծախսերի դրական տարբերությունից (շահույթից) պետությունը՝ որպես սեփականատեր, ստանում էր մասհանումներ և շահութահարկ:

Այսպես՝ որպեսզի մասնաձյուղերը շահագրգռված լինեն ավելի արդյունավետ գործելու, և, դրա հետ մեկտեղ, ապահովվեն իրացվելիության պահանջները, մեր կարծիքով, անհրաժեշտ է կենտրոնի որոշումներն ուղղակիորեն կատարողից դառնան միջոցները համեմատաբար ինքնուրույն տնօրինող, ինքնաֆինանսավորվող կառույց հետևյալ տնտեսական մեխանիզմի միջոցով: Բանկը իր հնարավորությունների սահմաններում և մասնա-


³ Տե՛ս **Արսլանбеков-Федоров А.**, Служба внутреннего контроля банка: организация и функционирование. ., Банковское дело”, 2002, № 1:

ճյուղի կողմից ներկայացված հայտի հիման վրա վերջինիս տրամադրում է դրամական միջոցներ որոշակի տոկոսադրույքով: Ղա, որպես կանոն, պետք է հավասար կամ գերադասելի փոքր լինի ավանդի տոկոսադրույքից, որն էլ ներգրավված միջոցների հետ միասին կդառնա մասնաճյուղի կողմից տնօրինվող: Սակայն բանկային ռիսկերի մեղմման նպատակով տրամադրված միջոցների դիմաց պետք է կատարվի պարտադիր պահուստավորում՝ ռիսկի ֆոնդի ձևավորում: Պահուստավորման չափը բանկը կարող է սահմանել՝ ելնելով տվյալ մասնաճյուղի կառավարման որակից, եկամտաբերության աստիճանից, ներքին նորմատիվների խախտումների քանակից և այլ գործոններից:

Բացի այդ, հարկ է սահմանել մասնաճյուղի կողմից ստացված շահույթից մասհանումների չափը, որը, պայմանավորված յուրաքանչյուր տարվա ծրագրերի ֆինանսավորման անհրաժեշտությամբ, պետք է որոշվի բանկի խորհրդի կողմից: Այսինքն՝ մասնաճյուղին պետք է թողնվի շահույթի մի մասը դրա պահպանման, բանկային գործառնությունների կատարելագործման, աշխատակիցներին նյութական խրախուսման նպատակով օգտագործման համար: Նման պայմաններում, բնականաբար, տնտեսական մասնաճյուղերն առավել արդյունավետ կգործեն, քանի որ առկա է նյութական շահագրգռության գործոնը:

Ստավախությունն այն է, որ մասնաճյուղերը, եկամտաբերության հետևից ընկնելով, կարող են խարխուլել բանկի ֆինանսական կայունությունը, իրացվելիությունը: Ղա, մեր կարծիքով, այնքան էլ հիմնավորված չէ. չէ՞ որ վատորակ վարկերի պահուստավորումը կատարվում է եկամուտների հաշվին, և մեծ չափով դրանց առկայությունը հետադարձ էֆեկտի պատճառ կդառնա, այսինքն՝ կնվազեցնի սպասվելիք շահույթի մեծությունը: Բացի այդ, ինչպես արդեն նշել ենք, բանկի ներքին նորմատիվների խախտումների դեպքում կսահմանվեն բարձր տուգանքներ, որոնք կվճարվեն մասնաճյուղի եկամուտներից և ղեկավարների գրպանից: Այսկերպ կնվազի խախտումների քանակը:

Նշված միջոցառումները կզուգակցվեն բանկի կողմից գործունեության տարեկան, որոշ դեպքերում նաև արտահերթ ստուգումներով, մշտադիտարկումներով, որոնք կապահովեն մասնաճյուղերի զգոնությունը, հետևաբար՝ հուսալիությունը:



ԱՐՄԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՊՏՀ բանկային և ապահովագրական գործի
ամբիոնի ասպիրանտ

ՀՀ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՉԱՎԱՐՏՎԱԾ ՌԻՍԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀՈՒՄՏԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Տեխնիկական պահուստները կարևոր դեր են խաղում ապահովագրական ընկերությունների ֆինանսական վճարունակությունն ապահովելիս: Ըստ էության, դրանք կարելի է տարանջատել երկու մասի՝ պայմանագրից բխող պարտավորությունների պահուստ և չկատարված հատուցումների գծով պահուստ: Պայմանագրերից բխող պարտավորությունների պահուստները ևս կարելի է բաժանել երկու մասի՝ չվաստակած ապահովագրավճարների պահուստ (ՉԱՊ) և չավարտված ռիսկերի գծով պահուստ: ՀՀ ապահովագրական ընկերությունները ձևավորում են միայն ՉԱՊ, որի հաշվարկման մեթոդաբանությունը սահմանված է ՀՀ ԿԲ խորհրդի 31.08.2010 թ. թիվ 219 Ն որոշմամբ հաստատված «Տեխնիկական պահուստների տեսակները, դրանց ձևավորման կարգը» կանոնակարգ 3/03-ով (այսուհետ՝ Կանոնակարգ 3/03):

ՀՀ ապահովագրական շուկայի արագընթաց զարգացումը՝ պայմանավորված որոշակի պարտադիր ապահովագրությունների¹ ներդրմամբ (ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն (ԱՊՊԱ) և բյուջետային աշխատողների առողջության ապահովագրություն (ԱՌՊԱ)), կարող է ռիսկային լինել ապահովագրական շուկայի համար և առաջացնել հավելյալ պահուստների անհրաժեշտություն:

Այս առումով, տեղական ընկերությունների կողմից ձևավորվող համընդհանուր բնույթի պահուստները չեն արտացոլում իրենց առանձնահատ-

¹ Այս հոդվածի շրջանակներում ապահովագրություն ասելով պետք է հասկանալ ոչ կյանքի ապահովագրությունը:

կուրյունները, ինչը երբեմն հանգեցնում է գործունեությանը բնորոշ ռիսկերի գերազնահատմանը կամ թերազնահատմանը: Խնդիրը լուծելու համար ապահովագրական ընկերությունները սովորաբար կազմավորում են հավելյալ՝ այլ պահուստներ: Դրանցից մեկը չավարտված ռիսկերի պահուստն է, որը մի շարք երկրների ապահովագրական ընկերությունների կողմից ձևավորվում և հաշվարկվում է ստոխաստիկ մոդելավորման սկզբունքով՝ հաշվարկման տարբեր մոտեցումներով:

Մենք առաջարկում ենք որպես հիմք ընդունել դետերմինացված մոդելը, ինչով յուրաքանչյուր ապահովագրական ընկերություն կարող է մշակել իր առանձնահատկություններին բնորոշ չավարտված ռիսկերի պահուստի (ՉՌՊ) հաշվարկման ավելի համապարփակ մոդել:

Չավարտված ռիսկերի պահուստը (Unexpired Risk Reserve) հաշվարկվում է՝ հիմք ընդունելով ապագա հայցերը և ծախսերը (բացառությամբ ներդրումային ծախսերի), որոնք կարող են առաջանալ պահուստը հաշվարկելու օրվանից հետո և կապված են տվյալ օրվա դրությամբ գործող պայմանագրերի հետ: Վերոնշյալ գումարը համեմատվում է չվաստակած ապահովագրավճարների պահուստների (և պարզավճարներին առնչվող կամայական այլ վճարի) հետ՝ բոլոր հետաձգված վճարներից հետո (Deferred Acquisition Costs): Այս գումարը գերազանցող ցանկացած գումար ճանաչվում է որպես չավարտված ռիսկերի պահուստ: Ճշգրիտ մեծություն ստանալու նպատակով պետք է վերցնել հաշվարկում ընդգրկված մեծությունների զուտ արժեքները (նվազեցված վերաապահովագրողի մասնաբաժինը այդ մեծություններում)²:

«-ում տեխնիկական պահուստների վերաբերյալ մինչ օրս կատարված վերլուծությունների մեջ հայտնի չէ որևէ հետազոտություն, որն անդրադարձած լինի «-ում չավարտված ռիսկի պահուստի ձևավորման և հաշվարկման առանձնահատկություններին:

Գրեթե նույնը կարելի է ասել նաև Ռուսաստանի ապահովագրական շուկայի մասին: Պարտադիր ապահովագրության ներդրմամբ ապահովագրական շուկայի արագ ընդլայնումն առաջացնում է պահուստավորման հարցի վերանայման անհրաժեշտություն: Այդ իսկ պատճառով ՌԴ ֆինանսների նախարարությունը վերջերս կատարած հետազոտությամբ առաջարկում է հավասարակշռման պահուստի փոխարեն (սակագների նվազեցման դեպքում) որպես փոխհատուցման գործիք ձևավորել չավարտված ռիսկերի պահուստ: Այս հավելյալ պահուստի ձևավորումը համահունչ է նաև նոր սակագնային բարեփոխումներին, ըստ որի պետք է սահմանել սակագների նվազագույն և առավելագույն չափեր: Հաշվապահական հաշվառման ռուսական ստանդարտներից անցումը միջազգային ստանդարտներին նախատեսում է նաև պարտադիր պահուստների շարքում չավարտված ռիսկի պահուստ: Ստորև կքննարկվի նաև ՌԴ-ում ապահովագրական ընկերությունների կողմից օգտագործվող չավարտված ռիսկերի հաշվարկման մեթոդաբանությունը:

« ապահովագրական շուկայի համար ՉՌՊ-ն հաշվարկելիս կիրառվել է երկու մոտեցում՝ հաշվապահական նոր ստանդարտներին անցման հետ կապված ՌԴ ակտուարների և Կիպրոսի ակտուարների ասոցիացիայի առաջարկած մեթոդները:

«տփորձական (էմպիրիկ) վերլուծություն կատարելու նպատակով օգտագործվել են « ապահովագրական ընկերությունների, « կենտրոնական

² Այս հոդվածի շրջանակներում մենք կօգտագործենք այդ մեծությունների համախառն արժեքները:

բանկի կայքէջից³ հասանելի՝ 2009, 2010 և 2011 թվականների տարեկան հրապարակվող տվյալները:

Պետք է նկատել, որ, սովորաբար, ՉՌՊ հաշվարկի դեպքում կիրառվող մեթոդաբանություններն այս պահուստը հաշվարկում են ըստ առանձին ապահովագրական դասերի: Այդ տվյալների՝ հրապարակման ենթակա չլինելու պատճառով հաշվարկները կատարվել են ընդհանուր պահուստներին առնչվող ցուցանիշների հիման վրա: Ընդ որում, ապահովագրական ընկերություններին առաջարկվում է նշված մեթոդի պարագայում ՉՌՊ-ն հաշվարկել ըստ առանձին ապահովագրական դասերի:

Ռ-7 ակտուարների մեթոդաբանությամբ՝ ՉՌՊ հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով.

$$\text{ՉՌՊ} = \max(\text{ՉԱՊ} \times \text{վնասաբերո յություն} \times (1 + \text{կարգավորման ծախսերի մասնաբաժինը հատուցու մներում}) + \text{ՄՕԾ} - \text{ՉԱՊ}; 0),$$

որտեղ՝

ՉՌՊ - չավարտված ռիսկի պահուստի չափը՝ գնահատման օրվա դրությամբ,

ՉԱՊ - չվաստակած ապահովագրավճարների պահուստի չափը՝ գնահատման օրվա դրությամբ,

վնասաբերություն - հաշվարկվել է ըստ ՀՀ ԿԲ 3/03 կանոնակարգի սահմանված հետևյալ բանաձևով (առանց ներառելու կարգավորման ծախսերը)՝

$$\text{վ}_{\text{ն}} = (\text{Հատուցում} + \text{ՆՉՊՊ}_{\text{ֆոֆ}} + \text{ՏՉՊՊ}_{\text{ֆոֆ}}) / \text{Հաշվեգրված ապ. վճար} - \text{ՉԱՊ}_{\text{ֆոֆ}} - \text{դադարեցված պայմանագրերի րով ապ. վճար}$$

ՄՕԾ - միջնորդավճարի օրական ծախսագրումն է (deferred acquisition cost), հաշվարկվել է հետևյալ բանաձևով՝

ՄՕԾ= միջնորդավճար x պայմանագրային գործողության օրերի քանակ/ պայմանագրի չլրացած օրերի քանակ

Կատարված հաշվարկի արդյունքները բերված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

ՀՀ ապահովագրական ընկերությունների չավարտված ռիսկերի պահուստի հաշվարկն ըստ Ռուսաստանի ակտուարների առաջարկած մեթոդաբանության

հազար դրամ

	2011	2010	2009
ՉԱՊ	5.004.574	1.997.212	2.050.887
Վնասաբերություն	50.08%	22.9%	31%
Կարգավորման ծախսերի մասնաբաժին հատուցումներում	1.66%	5.27%	2.81%
Միջնորդավճար	2.127.123	444.876	476.594
ՄՕԾ	1.313.373	107.654	43.690
ՉՌՊ	0	0	0

Հաշվարկից երևում է, որ այս դեպքում ՉՌՊ մեծությունը հավասար է զրոյի. հիմնականում պայմանավորված է վնասաբերության ցածր ցուցանիշով: Մինչդեռ, վնասաբերությունը կարող է զգալիորեն ավելի մեծ լինել, քան

³ Տե՛ս <https://www.cba.am/AM/ppperiodicals/fin-ham-12.pdf>

վերը բերված ցուցանիշն է (օրինակ՝ ԱՊՊԱ պարագայում): Եթե վերցնենք 74% վնասաբերության ցուցանիշ⁴, ապա ՉՌՊ մեծությունը կլինի մոտ 73.710.000 ՀՀ դրամ:

Կիպրոսի ակտուարների առաջարկած մեթոդաբանությամբ ՉՌՊ հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով.

$$\text{ՉՌՊ} = \max\{E[\text{հայցեր}] + E[\text{ծախսեր}] - (\text{ՉԱՊ} + \text{ՉԱՎ} - \text{ՍՕԾ}_{\text{ՉԱՊ}} - \text{ՍՕԾ}_{\text{ՉԱՎ}}); 0\} ,$$

որտեղ՝

ՉՌՊ - չավարտված ռիսկի պահուստի չափը՝ գնահատման օրվա դրությամբ,

E[հայցեր] - գնահատման օրվանից հետո ի հայտ եկող հնարավոր հայցերն են այն պայմանագրերի գծով, որոնց չավարտված ռիսկն ընկնում է գնահատման ժամանակահատվածի մեջ՝ ներառյալ այս հայցերի կառավարման հետ կապված ծախսերը,

E[ծախսեր] - գնահատման օրվանից հետո ի հայտ եկող հնարավոր ծախսերն են այն պայմանագրերի գծով, որոնց չավարտված ռիսկը ընկնում է գնահատման ժամանակահատվածի մեջ,

ՉԱՊ - չվաստակած ապահովագրավճարների պահուստի չափը՝ գնահատման օրվա դրությամբ,

ՉԱՎ - ապահովագրավճարների պարբերական վճարումների չվճարված չափը՝ գնահատման օրվա դրությամբ այն մասով, որը ներառված չէ ՉԱՊ-ում,

ՍՕԾ_{ՉԱՊ} - ՉԱՊ ապահովագրավճարների հետ կապված միջնորդավճարի օրական ծախսագրումը,

ՍՕԾ_{ՉԱՎ} - ՉԱՎ-ի հետ կապված միջնորդավճարի օրական ծախսագրումը:

Հաշվարկած պահուստը պետք է ճշգրտվի՝ գնահատման և հաշվարկման օրերի միջև տեղի ունենալիք բոլոր հայտնի իրադարձություններով:

Հաշվարկի հիմքում ընկած ենթադրությունները պետք է անփոփոխ մնան բոլոր տարիների համար՝ բացառությամբ այն դեպքերի, երբ բացահայտվել են հանգամանքների այնպիսի փոփոխություններ, որոնք կարող են սկզբնական ենթադրությունների փոփոխության պատճառ լինել: Այսպես՝

- ապահովագրավճարների հետ կապված հայտնի միտումներ,
- չմարված ռիսկ ներկայացնող հայցերի մակարդակի վրա ազդող հայտնի գործոններ,
- ծախսերի ծավալի հետ կապված նախատեսված կամ պլանավորված փոփոխություններ:

Նշված մեթոդով ՉՌՊ հաշվարկելու համար պետք է ունենալ հաջորդ տարվա ակնկալվող հատուցումների և ծախսերի մեծությունները: Քանի որ մենք հաշվարկը կատարելու ենք 2009-2011 թվականների համար, ապա կօգտագործենք հատուցումների փաստացի թվերը:

Բացի այդ, անհրաժեշտ է հաշվետու օրվա դրությամբ ունենալ ՉԱՊ և պայմանագրի իրացման հետ կապված ծախսերի մեծությունները: Վերջինիս համար վերցնում ենք կարգավորման ծախսերը, իսկ որոշ դեպքերում նաև այլ ծախսեր (պահպանման, հայցերի կառավարման, ներդրումային): ՉԱՊ

⁴ 31.12.2012 թ. դրությամբ ԱՊՊԱ շուկայի վնասաբերության մեծությունն է՝ ըստ Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոյի կայքէջի՝ <http://paap.am/datas/zlawdocs/2fa775db07ba2fd6c3a33bf684f030b8.pdf>

հաշվարկման հաստատված մեթոդաբանության կիրառման արդյունքում ՉԱՎ և ՄՕԾ₂ԱՎ մեծությունները գրոյական են: Իսկ որպես ՄՕԾ₂ԱՊ կվերցնենք միջնորդավճարները (ընկերությունները կարող են հաշվարկել և միջնորդավճարներին ավելացնել նաև ապահովագրության յուրաքանչյուր դասի գծով աշխատակիցների ծանրաբեռնվածությունը):

Կատարված հաշվարկի արդյունքները բերված են աղյուսակ 2-ում: Արդյունքում՝ 2011 թ. համար ՉՌՊ մեծությունը չափազանց մեծ է, որն, ամեն դեպքում, նպատակահարմար չէ կիրառել ՀՀ ապահովագրական շուկայում:

Այսպիսով՝ վերը նշված երկու մեթոդներից ՀՀ ապահովագրական շուկայում ավելի կիրառելի է առաջին մեթոդաբանությունը: Կարևոր է նաև այն եզրահանգումը, որ ՉՌՊ պետք է ձևավորել ավելի վնասաբեր դասերի համար: Հաշվի առնելով վերը նշվածը և նկատի ունենալով ՀՀ ապահովագրական շուկայի զարգացումները, հավանական վնասների աճը՝ այս պահուստը նպատակ ունի կանխելու ապահովագրական ընկերությունների վճարունակության խնդրի առաջացումը:

Աղյուսակ 2

ՀՀ ապահովագրական ընկերությունների չավարտված ռիսկերի պահուստի հաշվարկն ըստ Կիպրոսի ակտուարների ասոցիացիայի կողմից կիրառվող մեթոդաբանության

հազար դրամ

	2011	2010	2009
Հատուցումներ	8.140.853	1.745.567	1.900.596
Ծախսեր	135.247	91.953	53.351
ՉԱՊ	5.004.574	1.997.212	2.050.887
ՀՕԾ ₂ ԱՊ	2.127.123	444.876	476.594
ՀՕԾ ₂ ԱՎ	0	0	0
ՉՌՊ	5.398.649	285.184	379.654

Հոդվածում դիտարկեցինք ՉՌՊ հաշվարկման երկու մեթոդաբանություն՝ դրանք օգտագործելով ՀՀ ապահովագրական ընկերությունների նույն ցուցանիշը հաշվարկելու նպատակով: Պարզվեց, որ գործնականում ավելի հարմար է կիրառել ՌԴ ակտուարների կողմից առաջարկվող մեթոդաբանությունը, որի համաձայն ՉՌՊ և վնասաբերության ցուցանիշի հարաբերակցությունը (կռեյլացիա) դրական է, մասնավորապես, վնասաբերության մեծ ցուցանիշների դեպքում դրա ձևավորման անհրաժեշտություն է առաջանում:

Առայժմ հնարավորություն չունենք հաշվարկները կատարել ըստ առանձին դասերի, ինչն առավել ճշգրիտ արդյունքների կհանգեցնեն: Հետագայում ՉՌՊ հաշվարկելիս հնարավոր է այլ մոտեցման կիրառում. մասնավորապես՝ հաշվարկներ կատարել որպես ապահովագրավճարների գծով պարտավորություն: Կատարված վերլուծությունն առաջինն է այս բնագավառում, և կարող է լրացումների կարիք առաջանալ: Ինչևէ, անգամ այս մեթոդաբանությունների կիրառման դեպքում հաշվարկները ցույց տվեցին ՉՌՊ ձևավորման անհրաժեշտությունը ՀՀ ապահովագրական ընկերությունների համար: Այս պնդումը հատկապես տեղին կլինի ապահովագրական շուկայում առաջարկվող մի շարք նորամուծությունների գործադրումից հետո:

